ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ. Արարատի մարզ. գ.Գեղանիստ. (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2015թվականի N 19-Ն

ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի պահանջներով.

Հաստատել Գեղանիստ գյուղական համայնքի 2015թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածքի 18-րդ կետի պահանջներով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական շինության) տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1. Մինչև 300քմ.ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ
2. Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից 500 քմ. ընդ. մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 15000 դրամ

բ) 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ
գ) 1001 մինչև 3000քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ:
դ) 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ
4) 20 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների հանար 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված շին. թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության համար 1500դրամ
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների , վերնակառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի) կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով
1) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների , վերնակառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկահոլային խմիչքների թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 20 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ , հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 160000դ.:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 40000 դրամ:

4) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **50000 դրամ**

5) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա)հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 դրամ:

բ) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաներ), խաղատների ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար- 25000 դրամ

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար- 50000 դրամ

3) բաղնիքների (սաունաների) համար- 200000 դրամ

4) խաղատների կազմակերպման համար- 500000 դրամ

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքնչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

2) թունդ ալկահոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝ 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսի (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար 10000 դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:

11. Համայնքային տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար՝ 2000դրամ

13. Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

1) յուրաքանչյուր բնակչի համար՝ 50 դրամ

2) սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար՝ 400 դրամ

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափի փոփոխություն չի կարող կատարվել:

Սույն որոշման առաջին, երկրորդ և երրորդ կետերի վրա դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ

2. ԳԵՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ

3. ԴԻՎԴԱՐՅԱՆ ՕՀԱՆ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ

6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԻԿ ԱԴԻԼԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գեղանիստ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գեղանիստ, (093)706310 gexanist-hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2015թվականի N 20-Ն

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վարչական բյուջեի (11.1.2) պահուստային ֆոնդ ծրագրի /4891/ Պահուստային միջոցներ հոդվածից պակասեցնել 995.000(ինը հարյուր իննսունհինգ հազար)դրամ:
2. Վարչական բյուջեի (04.5.1)ճանապարհային տրանսպորտ ծրագրի /4269/ հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածին ավելացնել 995.000(ինը հարյուր իննսունհինգ հազար)դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԵՓՐԵՄ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԼԻԿ
3. ԴԻՎԴԱՐՅԱՆ ՕՀԱՆ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՏԵՓԱՆ
7. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԳԱՍՊԱՐ

Համայնքի ղեկավար՝ Վաչիկ Ադիլխանյան